

ԲՍՁՄՍ.Վ.Գ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑՎԱՆ

ՌՅԿԷ - ՌՅԿԸ


ՀԱՅՈՐ

ՁԵ

1928

ՅՈՒԼԻՍ
ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՒ 7-8



ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԲԱՐՈՁՈՒԹԻՒՆԵԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

(Շարունակութիւն, տես Բազմապէս 1928, էջ 81)

Մեր մարտի մատենախօսական յօդուածին՝ մէջ խոստացած էինք յատուկ հետազոտութեան նիւթ առնուլ և ճշմարիտ բանասիրութեան այժմեան տուած լոյսերու օժանդակութեամբ հաստատել Հայաստանի մէջ նախ քան զՍ. Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէութեան քարոզութիւնը, ընդդէմ մեր հոգեկից Մեծ. Հ. Վարդան Վ.ի, որ անոր զոյութիւնը ջանացք էր ժխտել իւր նոր հրատարակած Կարևոր ինդիքներ Հայ Եկեղեցոյ պատմութենէն՝ քննադատական ուսումնասիրութեան մէջ:

Չէինք ուզեր ի զուր ժամաժճառ ըլլալ վերատին դատնալով մեր նախորդ գրախօսականին վրայ, ուր առանց բնաւ հետազոտուելիք նիւթին էութեան մէջ մտնելու և ապացոյցներու նկատմամբ արտայայ-

տուելու՝ բաւականացած էինք մի միայն ցուցնելով (– շատերու մէջէն քաղուած մի քանի օրինակներով միայն) – որ այդ երկասիրութիւնը պարունակած սխալներու և անուշադրութեանց ու հակասութեանց պատճառաւ հետի է քանասիրական ծանրակշիռ հեղինակորիւն մ'ըլլալի. բայց որովհետև այժմ Մեծ. Հայրը նոր պաշտպանողականով՝ մը կը համարի մեր ներկայացուցած դիտողութեանց զօրութիւնը տկարացնել, ստիպուած ենք վերստին համառօտիւ շեշտելու, և ինչպէս սովորական ընկերական բարբառով կ'ըստի՝ կետերը ղեկի ի–երուն վրայ, և հաստատել որ հակառակ պաշտպանութեան համար թափուած բոլոր ճիգերու, մեր դիտած բոլոր սխալները կը ձեռն սխալ, բոլոր հակա-

1. Բազմ. 1928 էջ 81–92.

2. Հ. Վարդան Վ. Հացունի. Կարևոր ինդիքներ

Հայ Եկեղեցոյ պատմութենէն. տպ. 1927.

3. Բազմ. 1928 էջ 181–195 «Վճնագրամբերու».

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ. ԿԱՐԵՎՈՐ ԻՆԴԻՔՆԵՐ
ԿԷՆՏՐՈՆ



սութիւնները կը Ֆիան նոյնպէս հակասու-
թիւն:

Հետեւինք իր թիւերու կարգին մի առ մի:

1. — Եթեբրիայի վկայութեան նկատ-
մամբ մատնանշուած հակասութիւնը մեր-
ժելու համար, կը հնարէ իւր տեսութեան
մէջ բաժանում մը երկու զատ խնդիրներու՝
ցոյտարիւն և վաւերականորիւն՝ Արգարեան
թղթակցութեան մէջ, առանց անդադա-
նալու որ հակասութիւնը բարձուած չէ այ-
սու, այլ աւելի բարդուած. որովհետեւ եթէ
անզոր է ականատես Եթեբրիայի վկայու-
թիւնը Արգարեան թղթոյն վաւերականու-
թիւնը ցուցնելու համար, նոյնպէս անզոր
է նաև միևնոյն ուխտաւորուհւոյն վկայու-
թիւնը թովմայեան գերեզմանին վաւերա-
կանութիւնը ցուցնելու համար. և միշտ
հակասութիւն է մին ընդունել և միւսը
մերժել: Բաց աստի կարելի՞ է արդեօք վա-
ւերականութեան խնդիր յարուցանել գրու-
թեան մը նկատմամբ որուն սկզբնագիրը
տեսած ըլլալը կը յայտնէ Եթեբրիա:

2. — De-Vit-ի վկայութիւնը բերած էինք
ապացուցանելու համար՝ որ այն Արգարե-
զոր Մեծ. Հեղինակը համարած էր իբրև ա-
րար թագաւոր մը, սխալ մեկնելով Տակի-
տոսի գործածած արար անուան իմաստը,
է նոյն ինքն Երեսիրոյ և Ուրոյննաց թագա-
ւորն Արգար. իսկ թէ ինչպէս այդ Ար-
գարը կրնայ նաև Հայոց թագաւոր անուա-
նուիլ, արդէն կանխած ու յայտնած էինք
որ անոր բացատրութիւնը վերապահած ենք
առաջիկայ յօդուածիս:

3. — Միակ բացատրութիւնն է որ պիտի
կարենար նկատողութեան արժանի համա-
բուիլ, եթէ թերութիւն մը պատրուակել
ուզած ժամանակ՝ երևան չհանէր աւելի
ծանր թերութիւն մը բանասիրական ան-
ճշտութեան. որովհետև մինչ յառաջ բե-
րուած վկայութեան մէջ Նիկեփոր գործա-
ծած է Հրեաստան անունը պարզ իբրև զա-
ւարի մ'անուն, գուցելով անոր հետ Գայի-
լիա, Սամարիա, Երզն անունները, ինքը
լռելով այս վերջին գաւառները և միայն
անջատ Հրեաստան անունն առնելով, առաջ
բերած է շփոթութիւնը՝ վերածնելով զայն

իրբև աշխարհի նշանակ, մանաւանդ երբ
դիտուի որ «Հրեաստանն ու շրջականերն
զատ» բացատրութեան վրայ աւելցուցած
է Արարիա, Ատրիք աշխարհներու անուն-
ները:

4. — Կը պարունակէ թանկագին խոստո-
վանութիւն մը, որ մինչ մեր յարգանքը կը
յաւելու Հեղինակին նկատմամբ՝ իբրև ան-
ձի, ոչ նոյնպէս կը նպաստէ իբրև բանա-
սիրի՝ համարաւոյն և ցննական լրջութեան,
որուն թերին՝ զոր նկատած էինք, կարող
չէ ծածկել ապաժաման հետազօտութիւն
մը, քանի որ գիտենք որ վկայութեան կո-
չուած է իբրև ապացոյց հեղինակ մը՝ զոր
չէր կարողացած, և որուն համար այժմ կը
ստիպուի յայտնելու: «Էս կուխաս անքս
յունէի Դիոնի գործը՝ զոր յետոյ տեսայ և
կրցայ յաւագոյն ռոտումնասիրել հարցը»: Իսկ
ապաժաման երկար հետազօտութիւնը այլ
ևս զմեզ չի հետաքրքրեր:

5. — Աւելորդ կը համարինք վերստին
կրկնել «Որք ընթերցող և կատարեք գոյնա-
տակ երկոցունց ընտիրոցն» Սամուէլեան
յիշատակարանի ուղիղ հասկացողութիւնը.
բաւական ըլլայ աւետարանական յորդորը՝
որ ընթերցուն՝ ի միտ առչէ:

6. — Հակառակ Հեղինակին ենթադրու-
թեան՝ նկատած էինք որ Եղիշէի «Թաղեոս
յԱրևելս պատահէ» բացատրութեան մէջ,
Արևելք բառը Հայաստանն ալ կը նշանա-
կէր և բերած էինք նաև զանազան օրինակ-
ներ. արդ Հեղինակն իր պաշտպանողակա-
նին մէջ վկայութեան կոչելով Եղիշէի հե-
տեւալ մէկ իօսքը՝ Տրդատայ համար, որ
«լուսաւորեաց զխաւարայիս կողման Հիւ-
սիսոյ, զոր և այժմ (A50-ին) կամին կոր-
զել հանել խաւարասէր որդիքն արևելոց»
որ էին պարսիկները, կը հարցնէ: «Ո՞վ լա-
ւագոյն կրնար մեկնել արևելքը՝ քան զայն
գործածողն ու ժամանակակիցը»: «Իսկ
Հայաստանի Հիւսիսասյունութեան ուրիշ հին
գրաստեթ տուած էի», կ'ըսէ և կ'անցնի դաս
մը տալու թէ ինչպէս պէտք է չէ շփոթել
մեր դասական հեղինակաց ոսկեղէն բար-
բառը՝ միջնադարեան գրիչներու լեզուին
հետ:

Արդ առանց հարցնել ուզելու Մեծ. Հեղինակին թէ երբ կը սկսին իրեն համար, և երբ կ'աւարտին Միջին դարը և միջնադարեան կոչուած հեղինակները, քանի որ յաճախ այդ միևնոյն ծրարով պարուրուած են իր գրութեանց մէջ զանազան հեղինակներ և զանազան թուականներ՝ առանց ժամանակեան որոշ խորոցի մուշաղիբ ըլլալու, տեսնենք թէ արևելք բառն ստուգիւ ինչ իմաստ ունէր նոյն ինքն Եղիշէի և իր ժամանակակիցաց համար:

Նոյն իսկ հարևանցի սկնարկ մը կը բաւէ ցուցնելու՝ որ Եղիշէ արևելք բառը գործածած է բոլորովին անխօսի՝ ըստ պարագային և զանազան իմաստներով, ինչ որ զօրազգաբար վրիպած է Մեծ. Հօր մտադրութենէն:

Եղիշէ՝ բաց ի զանազան բացատրութեանց ինչպէս որդիքն արևելեայց, յարձակում արևելեայց, իշխանն արևելից հայն, ուր միշտ Պարսկաստան կը հասկցո՞ւի արևելք բառով:

— Ե՛ջ 23 ընդհանուր իմաստով կը գործածէ զայն, երբ քրիստոնէութեան ծաւալման ակնարկելով՝ կ'ըսէ. «Համատարած ընդ ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք և ընդ կղզիս, ոչ միայն ընդ արևմուտս, այլ և ընդ արևելս, այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ, և միջոցս լի է հոծութեամբ»:

— Ե՛ջ 45 մոգութեան վարդապետութիւնը կը ձկուր ընուլ զամենայն երկիրն պարսից և ևս անոր յարևելս հասանել» . որով Պարսկաստանէն ալ անզրագոյն հրնդկական աշխարհը կը նշանակէ:

— Ասոր հակառակ Ե՛ջ 8 երբ յիշատակելով թէ՛նդոս կայսեր ատաքած Անատոլ անուամբ զօրավարը՝ կ'ըսէ, «որ էր նորա պարսպպետ արևելից» կը հասկնայ Հայաստանէն ալ սաղին՝ Բիւզանդական կայսրութեան Փոքր Ասիոյ սահմաններու գաւառները: Եւ յետոյ

— Ե՛ջ 46 Հայաստան ինքնին կ'ըլլայ Արևելք՝ անուղղակի բացատրութեամբ ու լռելեայն, երբ արևմուտքի հակադրելով զայն՝ կ'ըսէ, «Լնդ մերոյ աշխարհի շարժմանն՝ և արևմուտք մեծապէս շարժեցան» : Ինչ որ քիչ վերջ շատ աւելի բացայայտ կերպով կը ծանուցանէ

— Ե՛ջ 55, ճիշդ գրեթէ երկու տող վար այն վկայութենէն զոր, ինչպէս վերագոյն յիշեցինք, Մեծ. Հայրն իբրև ապացոյց քաղած էր հակառակ մեզի. «Եւ իբրև յարման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհիկ: Եւ մինչդեռ երանելին թէ՛նդոս հարցանէր զամենայն սինդղիտոսն, և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեան, և հոգ տանէր մեծա յոժարութեամբ, զի մի Եղիշէն Մարտիկոս Արեւելից (այսինքն է Հայաստանի) յսփրչտակեսցին յանօրէն հեթանոսացն»:

Այսչափ անհաստիկ բաւական համարուի հաստատելու համար որ Եղիշէ զիտուած ունեցած չէ բնաւ Արևելք բառի սահմանէն արտաքսելու Հայաստանը, այլ թէ ընդհակառակն նոյն իսկ միայն արևելք կոչուող հոմանիշ և համազօր ճանչցած է երբեմն՝ Հայաստանի՝:

Տեսնենք հիմա նոյնպէս թէ ինչ կը մտածէին նաև ժամանակակիցները արևելք բառի նկատմամբ, և ի սէր համառօտութեան զանց ընելով բազմաթիւ վկայութիւններ, զանց ընելով Խորենացւոյ Հոբիփիմեանց ճառը, ուր քանիցս յեղեղուած է ոչ միայն արևելք իբրև Հայաստանի արտայայտիչ, այլ դեռ աւելին՝ Պարսև և Պարսկաստան կոչումները՝ որակելով յաճախ Հայ ազգն և հայ աշխարհը, անուշեք մի միայն անհերքելի հանգամանքով և վճռական ազդեցութեամբ՝ Շահապիվանի ժողովոյն վկայութիւնը, ուր համազօրմամբ եպիսկոպոսունք և հարք, (որոնց մէջ հաւանօրէն կար նոյն ինքն Եղիշէ վարդա-

1. Ս. Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենա-գրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցումաց զըջգրաց. Է ՎնևնախԿ. 1859. էջերը նշանակած ենք ըստ մեր այս հրատարակութեան.

2. Հետաքրքրական է նկատել որ Եղիշէի մէջ Պարս-

կաստանն ալ հեռագոյն համարուած է Ե՛ջ 123 ուր կը կարդանք. «Նյակ այն ևս չար է մեզ քան զամենայն, զի ոչ զուգնացեալ ոչ խոտորեցաւ ի նոցա օրէնսն, այլ այր մի համակողն, երևել ընդ ամենայն վերին ուշխարհս»:

պետն ալ), իրենց ժողովական վճռոց պաշտօնական գրութեան մէջ այսպէս կը խօսին. «Առաքելական կանոնն և Նիկիականն հաստատուն կացցէ, և մեք հնազանդեալք եմք և որ ինչ պիտոյ է ի Դոսա ի լրութիւն, և մանաւանդ ի մէջ տանս թորգոմայ և ԿՈՂՄԱՆՏ ԱՐԵՒԵԼԵԱՅՑՄ՝ հաստատեցուցուք»:

Ուրեմն Հայաստանի համագումար վարդապետները իրենց աշխարհը որակելու համար չէին տատամսիր բնաւ ի մէջ տուան թորգոմայ և կողմանց արևելիսայցս բացատրութիւնը գործածելու, և այս ոչ թէ Միջին դարերու մէջ, այլ 443-ին, որ է ըսել յառաջ բերուած 450 թուականէն եօթը տարի առաջ:

Իմքաղաքոր Մեծ. Հեղինակը սովորութիւն չունի ընդհանրապէս հեղինակաց վկայութիւնները միահամուռ և ամբողջովին կարդալու և ուսումնասիրելու, այլ միայն քաղելով ինչ որ իր անձնական տեսութեան նպատակը բերելով մ'ունի, կ'անտեսէ բոլորովին միւս ամէն վկայութիւնը, որքան և՛ ծանրակշիռ ըլլան և բոլորովին տարբեր լոյս սփռեն հետազոտուած խնդրոյն վրայ: Այս պատճառաւ սխալուած են յաճախ յառաջ բերուած եզրակացութիւնք: Նոյն իսկ Եղիշէի այս խնդրական կէտին մէջ, «որպէս և թաղեալ ՅԱՐԵՒԵԼԵՍ պատահե՛», եթէ քիչ մ'աւելի ուշադիր ըլլար և յառաջ վարէր երկու տող մ'ալ աւելի՛ ընթերցումը, ապահով ենք որ ի գուր պիտի չաշխատէր Հայաստանն Արևելքէ անջատելու և զթաղէտս Հայաստանի Առաքելութենէ զրկելու, որովհետև իսկոյն պիտի անդրադառնար թէ ինչպիսի՛ անխուսափելի հակասութեան մէջ է: Եթէ հաւանինք վայրկեան մը՝ ինչպէս ջանաց ապացուցանել, որ Արևելք բառով պէտք չենք բնաւ Հայաստանն իմանալ, և եթէ ընդհակառակն՝ ապացուցուած ընդունինք իրեն հետ՝ որ Հայաստանի աշխարհագրական ընտրուումն է

հիստորիա կողմը, այնու հանդերձ և միշտ անհրաժեշտ ստիպուած պիտի ըլլանք խոստովանելու որ Հայաստանի մէջ քրիստոնէական քարոզութիւնը տեղի ունեցած է առաքելի մը ձեռքով, թէպէտ և այդ մինչև ցարդ մեզ աւանդուածին պէս թաղէտս չի կոչուիր, այլ ինչպէս Եղիշէն կը յայտնէ՝ Անդրէաս կ'անուանուի: Թառաջ բերենք ամբողջութեամբ Եղիշէի այդ պարբերութիւնը, ուր Առաքելոց քարոզութեան վայրերը կը յիշատակուին՝ այսպէս. «Փութացան ամենեքեան ճեպել յիւրացանչիւր կողմանս ըստ առաջնորդութեան սուրբ Հոգւոյն. ինքն Պետրոս ի մեծն Հռոմ, Մարկոս յԱլեքսանդրիա, Թովմաս յաշխարհն հնդկաց, ՌՊԷՍ ԵՒ ԹԱՂԻՍՍ ՅԱՐԵՒԵԼԵՍ ՊԱՏԱՆԷ, և Փիլիպպոս ներքինոյն ի վերայ կառացն ուսուցանէ և մկրտէ, և առաքէ զնա զօրութեամբ Սուրբ Հոգոյն ի յԵթովպիա, զտանի և Յովհաննէս ի յԱսիա, որպէս և ԱՆՏՐԵԱՍ ի ԿՈՂՄԱՆՍ ՀԻՍՒՍՈՍ: Եւ ճէպէին ամենեքեան՝ ոմանք ի կղզիս հեռաւորս, և այլք ի խորն և ի զոգս ցամաքի ձգեալ սփոռցան յամենայն կողմանս երկրի: Իսկ Պաւղոս սկիզբն առնու մկրտել ի Դամասկոս, և անդադար ընթացիւք հասանէ յԵրուսաղէմէ մինչև ի Լիւբիկոն՝»:

Ուրեմն Եղիշէի այս ընթերցման հետևանքն անխուսափելի է. կամ արևելքն է Հայաստան, և այն տանն թաղէտս կը քարոզէ հոն. և կամ Հիւսիս է Հայաստան, և այն տանն՝ Անդրէաս է իւր Առաքելալը: Երկու պարագայի մէջ ալ Հայաստան Ս. Լուսաորէն շատ առաջ և առաքելի մը ձեռքով կը լուսաւորուի քրիստոնէական ճշմարտութեամբ:

- 7. — Անագան հնարուած հոգեբանական խորհրդածութիւն մը կարող չէ պատրուակել զբական և պատմական հակասութիւնը զոր դիտել տուած ենք:
- 8. — Հարկ չենք տեսներ երկար բա-

1. Հոս արժան կը համարինք զիտել առլ որ հաւանորէն Եղիշէի բնագրէն մի քանի տող պակաս է զբնագրաց օրինակողներու անուշադրութեամբ, որովհետև առաքելոց անուններն ամբողջութեամբ չեն, և հետևաբար իրաւոր կը համարինք մասնով որ Բարթողիմէոս

իբ անուան հանդէպ ի սկզբան զրուած պիտի ըլլար իբրև իրեն յատուկ առաքելութեան վայր՝ ուղղակի Հայաստան, և այն պատճառաւ ալ թաղէտի համար ալ փոխանակ նոյնը կրկնելու երկրորդ անգամ, բուսական համարուած է յարեւելս՝ ընդհանուր ամամբ:

ցատրութեանց յիշատակուած ձեռնարկին հակասութիւնը ցուցնելու համար իթէ «Առաքեալ վարդապետութիւնը» նալ առանդորհեալ ազդեցութեան ներքե կը վկայէ բանի մը, յայտնի է որ զայն կ'առնու այդ աւանդութեանէն, և եթէ կ'առնու՝ ինքը չի հնարեր: Միանգամայն ուրիշէն առնուլ բան մը, և միևնոյնը ինքը հնարել, ահաւաստիկ հակասութիւնը: — Գարձեալ դիտենք որ կարելի է արդօք լրջութեամբ ենթադրել որ արորի հեղինակ մը հայկական աւանդութիւն մը հերքել ուզելով, և միւս կողմանէ ալ մասամբ փոխառու տայոս համար մեզ՝ ստեղծած ըլլայ փոխանակ Արդա-թաւական ճարտութեան Ազգէլի մը ճարտութիւնը:

Ծ. — Քիչ վերջ առիթ պիտի ունենանք փաստաբու վկայութեան վերատիկ անդրադառնալու և հետազոտելու անոր բուն իմաստը. բաւական ըլլայ այժմէն յայտնել միայն որ անոր ուղիղ հասկացողութեան

համար հարկ չկայ դիմելու մինչև Չինոր Գլակացոյ բացատրութեան, որ իօթներորդ դարու հեղինակութեան կ'ըստի:

10. — Բացատրելու համար թէ ինչպէս այլուր, այսպէս նաև Հայաստանի մէջ, կրնային գերեզմաններ այլալուիլ, օրինակ բերած էինք Հոռոմայ մէջ անգամ Ս. Փարիանոս քահանայապետին սկերաց Անտրիոն(Ք)ԱՅՈՒՄԸ այնու հանդերձ որ անոր գերեզմանը միշտ և անընդհատ զգուշութեան ու պաշտաման առարկայ եղած էր. յիշելով միանգամայն որ երբ 1915 թուին գերեզմանը բացուեցաւ, փոխանակ սրբոյն նշխարաց՝ մէջէն ելաւ բոլորովին անմբըռնելի ոճով հոն թաքուցուած ՄՈՒՄՄՈՒ մը: Կը ցաւինք որ Մեծ. Հայրը մտազբարութեամբ մեր ըսածին բոլորովին հակառակն հասկցեր է, ինչպէս բոլորովին սխալ հասկըցուած է նաև մեր ըրած յիշատակութիւնը նախնեաց incubation կոչուած սովորութեան¹, որով շատ դիւրին էր որևէ մէկու

1. Այս առթիւ կ'արժէ վերստին անդրադառնալ այդ վաղեմի դարուց ստրուութեան վրայ և կորզուլ նոյնպէսի դեպք մը Բուզանդայ մէջ (Գար. Գ. էջ 101) ուր ամէն բացատրութեան աւելի պայծառ նկարագրած է incubation-ը սովորութիւնը:

«Իբրև գնացեալ զար օքնանս երկուս, զէջ եղև նոցա զիպէ ալ քաղցիք միջ: և արտաքոյ քաղցքին վկայանոց մի սուր տիկնոջն թեկզի: Իբրև պատահեաց այնմ, էջ սոփեսաւ, և իւր վման ունէր ի ներքս ի վեկայանոցի անդ. իսկ մագիստրիանոցն ունէին վման իւրեանց ի քաղցքին: Եւ իբրև կերաւ հաց սոփեսաւն, էարկ անկողին, և փակեաց զդուրս վկայանոցին, և ինքն ի նիտս եղեալ ի վերայ անկողին, կամէր լինել ի կողմ, մինչ զեռ արթուն էր, աւօք բացօք տեսանէր, զի յանկարք բացան զդունք վկայանոցին, և եղև ժողով մեծ բազմութեան վկայոցն, որ երեկոցն մեծապէս փառօք: Եւ հէտերը ընդ առաջ նոցա սուր տեկնէն թեկզէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլը որպէս ի լուսոյ հասանէին ի նմանէն. և անէին միմեանց ողշոյն, և ասէր քնտառ տեկնին թեկզ՝ Թէ Բարի՛ եկեք, սերելէք բարեկամք, և վաստակաւորք Քրիստոսի: Տուեալը միմեանց ողշոյն, արհեսը զեւրացանիւրս զաթոսան, նստին կարգաւ: Ապա սկսանէին սուրբքն խոսել, և ասէին. Սուրբքն տեսան, որ չի են երամարեալ յերկէս, զեռ ու աստէն ի նեղութեան են. են որք ի կապանս են, որք ի փեղակէս են, են որք յացսորս, և են որք յայլ բնութեան են ի զբարտութեան ի հարկս և ի խոշորանանս չարչարանաց: Եւ մեք փութապէս ժողովեացք, զի մի՛ անտեսութեամբ անփոթ արացուց նախնածնադէր լինել

տեսան հաւասացուցոյ: Այսն զի մանաւանդ բազում սեակք տեսան խափանեալ կան, և բազում աչքեր իւրազանցան. պարտ է մեզ զխափանելու մշակացն զՎաղէս խափանել, զի ամենայն մշակ ի զործ իւր կարնիսցէ: Եւ քաջ մշակն Բապտիստ յերձէջ գործն իւրս խափանեալ: Արջ եկաջ առացեսուց ի մէջ երկուս, որք երթիցն վճարցին ի կենաց զշարագործն վաղէս, Ապա մեռաւ անուն էր Սարգիս ի նոցանէ, և միւսուեմ թեղուրոս. արձակէին զնոսա, զնէին ժամ և ստէին. Ի սոյն ժամ եկանէր զուց և մեք, Եւ յարուցեալ զնացին և մեկնեցան:

Եւ զայս ամենայն լուեալ սոփեսաւն, որ էր ի վկայանոցին, և տեսեալ զայս տեսիլ աւօք բացօք, և կայր զարմացեալ, և տնքուն լինել մինչև յառաւուս զցազն: Եւ ընդ այդպ այդոյն եկին հասին մագիստրիանոցն, և ասն ցտփեաւան. Արջ զնացուց զնստապարկս: Եւ իօթպապառաստ լինէր, և ոչ կարէր ի սեղուոյ խաղալ: Իբրև սկսան նոցա ստեղծել զնա, իսկ նա քալանայր, հանէր զզգին, ոգի զղուզով ամէր, և ոչ կարէր բանիցն սուլ պատասխանի մինչև յերկոյ: Ապա իբրև երկոյ եղև, թողէն զնա մագիստրիանոցն ի վկայանոցին, և զնացին ի քաղցքն ի վման իւրեանց: Եւ սոփեսաւն փակէր զդուրս վկայանոցին, և ի կողմն եղեալ յերձուր սեղուոյն, յանկարծեակ զործեալ երեկոցս նա, զի բացան զդունք վկայանոցին, եկին կուտեցան, և լի եղև վկայանոցն նոցան վկայիւք: Եւ եկանէին միմեանց ընդ առաջ մեզա արանէին զաթոսա իւրացանչիւր կարգաւ յօրինեալ բոլորէին կարգէն ի նստել: Ապա զայն սուրբքն Սարգիս և թեղուրոս երկօրեան ի զործոյն՝ յոր

սրբոց նշխարները գողնալ. և այս ոճով ալ կրնար ասորի ուխտաւոր մը գողնալ Ս. Բարթողիմէոսի մասունքը. ինչ որ ինքը համարած է սխալմամբ լոկ սպասում մը տեսիլը տեսնելու և ըստ այնմ կը շտայլէ իկնն հարցումներու շարք մը:

11. — Դարձեալ Ս. Բարթողիմէոսի նշխարաց յայտնութեան նկատմամբ մատնանշած էինք Մեծ. Հեղինակին ցով երկու դրութիւն. — մերժելու ազգային պատմչաց աւանդած տեսիլները, և ընդունելու յոյն պատմչաց Անաստասի կայսեր ընծայած տեսիլը: Տրուած բացատրութիւնն ուղղակի ինդուէի շեղում մ'է և այնու հանդերձ կը հաստատէ նորէն մեր ըսածը. «Անաստասի ժամանակակից պատմիչի վկայութեան մէջ իրական է Ս. Բարթողիմէոսի նշխարաց գոյութիւնը Յունաց ցով»: Արդ կը հարցունենք ինչո՞վ իրական է այդ նշխարաց գոյութիւնը՝ եթէ ոչ միայն Անաստաս կայսեր ընծայուած տեսիլքին զօրութեամբ, որով ի Դարաս Միջագետաց կը շինէ եկեղեցի մը և հոն կը փոխադրէ զանոնք, առանց որոշել կարենալու թէ ուսկի՞ց արդեօք կը հանուին այդ նշխարք:

— Դարձեալ երբ «Թէնդորոս վերձանոց մատենագիրը... կը վկայէ... և Նիկիփոր կալիստոս Ը դարուն կը կրկնէ» միևնոյն բանը, իրաւունք չունէինք արդեօք անխտիր այդ երկու հեղինակներէն մին կամ միւրը յիշատակելու, առանց երկուքը միասին առնելու կամ միոյն աւելի քան միւսին նախադասութիւն տալու:

12. — Մեծ. Հեղինակին հաստատութեան հակառակ, ինչ որ վերստին կը կրկնէ այս պաշտպանողականին մէջ, որ «Ք. դա-

րու վերջերը Թովմայի հանգստարան մը կայ իրապէս Եղեսիոյ մէջ», ճակատեցուցած էինք Տիւշէնի սրամիտ հարցումը թէ ուսկի՞ց կկամ էին այդ աստրեկական եշխարք: Կ'երևի հարցման հողին լաւ թափանցուած է՞. Տիւշէն ոչ թէ հետաքրքրութիւն ունի իմանալու, այլ այդ փափուկ հարցմամբ՝ երզի՞ժական հարցում մը կ'ընէ եզրահանգ կեղծուպատիր ասանդութեան որով կը համարէին Ս. Թովմայի առաքելոյ գերեզման մ'ունենալ իրենց մէջ:

Ուրեմն շատ պայծառ է մեր նպատակը Տիւշէնի այդ երզի՞ժական հերքումն—հարցումը յատուք բերած միջոց. — Եթէ անհիմն կը համարուի Հայոց ասանդութիւնը թէ իրենց աշխարհի մէջ ունին Թովմաս Առաքելոյ նշխարներն, որովհետև միևնոյն Առաքելոյ գերեզմանը կը գտնուի Եղեսիոյ մէջ. արդ երբ կ'ապացուցուի որ այդ եզրահանգ գերեզմանը բոլորովին յերիւրանք մ'էր, նովին իսկ գործով հայկական ասանդութեան հաստատուած կը մնայ իւր զօրութեան մէջ:

Մեր առաջիկայ յօդուածին ընթացքին մէջ առիթ պիտի ունենանք տեսնելու որ այդ Թովմայեան ինքնահնար գերեզմանը, պէտք է աւելի հաստատուն հիմամբ պարուհանակէր Թագէտոս առաքելոյ նշխարները:

13. — Վերջին պաշտպանողական նոր բացատրութիւնս կը ընդունանք ընթերցողաց. հասին յէջ 95 «Տաթև անունէն հանուած ձև ու վէպ մ'է Ստամբէտս» պարբերութեան վերջն ազուցանել զայն իբրև կարևոր errata - corrigé մը, զբութեան իմաստը լաւ հասկնալու համար: Մենք վերջին անգամ մ'ալ կը հարցնենք Մեծ.

առաքեալ էին, և մասնէն ի ժողով սրբոցն, Ազա յայնքան բազմութիւն ժողովոյ վկայեցն, եթէ Ո'րդէս յոր գործ երթեալ էի՞ վճարեցէ: Պատասխանն առեալ սակին. Թէ իր իսկ յորժամ ի մէջ զնացաց, սպանաց զՔիշտմին եշխարութեան զվաղես. և ի ուրի ժամ առ ձեզ դարձեալ եկեալ եմք աւասիկ առ ձեզ, իւ յարուցեալ գոհանային անհնայն բազմութիւն ժողովոյն գտեսուել մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. և ինքեանք մեկնեցան յիւրեացն իւր տեղիս: Եւ յառի մեծ լիւնք ստիսեանս մինչև յայգ յառասանս:

Ապա իբրև այդ եզր, եկին մագիստրանոսն, սանն

ցտիսեանսն. Արի զնացուց առ կայսրն, Նորա պատասխանի տուեալ, սա՛ն. Կայսրն ճնտու, արդ մեր առ ո' երթեցուց: Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, և զբաւական եզրակ ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս: Եթէ ոչ, սա՛ն, հարցին աւար վաճառք, և քաղցք յափշտակեցին, ես' եթէ կայցէ նոյն կայսրն՝ զլնասեցաց, զի ինկեցի զայս հռոսել: Ապա թոյլ տային նմա մագիստրանոսն մինչև յերիս աւուրս, և յես երկք աւուրցն ստուգեցաւ զրոյցն, զի մեծալ էր կայսրն»:

Հեղինակին. Եթէ հռչակաւոր մենաստաւնին Տարե կոչումը որ և իցէ յարարեւրութիւն մը չունի Եւստաթէոս անունով առաքելոյ կամ նահատակի մը անձին և կամ նշխարաց հետ, կը հաճի՞ արդեօք բացատրել մեզի թէ ուսկից ծագած է այդ անունը: Մինչև ի նոր սպացոյց մինը պիտի շարունակենք հաստատել որ Տարե կոչումը ուրիշ բան չէ եթէ ոչ Եւստաթէոս անուն կրճատոււմը:

Այսչափ բաւական ըլլալ ի փակուսն մեր տեսութեանց Մեծ. Հօր «Կարևոր խնդիրներ» ու ուսումնասիրութեան անճշտութեանը և բանասիրական թիւրութեանց նկատմամբ. և անցնինք այլևս բուն խոնդրոյն հետազօտութեան, թէ արդեօք ՀԱՅՈՑ ՄԷՋ ԵՂԱՄ ԵՆՆԱՒ ԲԱՆ ԶՍ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆ ՄԸ: (շարունակելի)

Հ. Յ. Արմբ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՔԱՂ

(Բով յԵ ԳԲԳԳ-ԲԲՆԻԵ Դ-Լ-Լ-Լ-Լ Ա-Լ-Լ-Լ-Լ-Լ)
(Շար. տես Բագմատիպ, 1928, էջ 72)

ԺԸ. — Ղուկ. ԺԵ. 8-9.

«Կամ ո՞վ իցէ կիև... (9) Կոչէ զբարեկամս և զզրացիս»:

Յոյն բնագիրն ունի «φίλας και γειτόνας» = բարեկամուհիներն ու զրացուհիները, ինչպէս նաև բոլոր թարգմանութիւնները՝ Ասորի-Եթովպ-Վուկ. ևն, որոնք անխորտի իգական կը դնեն:

Թէև պարզապէս հայ թարգմանութենէն յինքեան չի հասկցուիր սեռի տարբերութիւնը, սակայն նկատի առնելով արեւելեան մտայնութիւնն ու բարբերը և կնոջ դերը, զժուար չէր գուշակել զայն:

Անորոշութեան պատճառը կամ այս դիրքը, յայտնի է, անո՞վ կը մեկնուի որ Մեր Ոսկեղաւու հեղինակներն անխորտի և առանց բացառութեան ամենեւին չեն կիրարկել ունի իգականաձեւը, մինչև կարծես խորշած կ'երևին թագուհի բառէն ան-

գամ (որուն մէջ ունի կը յայտնուի), Եսթեր. Ա. 9. «Ասթինէ կին թագաւորին», 15. «Ասթինեայ կնոջ թագաւորին» 16. և... ինչպէս հաւանօրէն կարելի է հետեւեցնել Փաւստոսի «Ի կնոջէ թագաւորին» շատ տանօթ և վիճուած բացատրութենէն ալ. և տիկինը՝ երբեմն փորձանակուած նաև դիտոյ բառով՝ նոյնը կը հաստատէ, քանի որ թագուհիէ Հայոց սովորական չէ գէթ այդ դարուն:

Կը մնար ուրեմն որ բնականաբար այդ և կիև բառերով լրացնէին սեռի պահանջը, ինչպէս տեսանք յիշեալ փաւստեան օրինակին մէջ և Ս. Գրոց և Հայր շատ մը տեղեր, օր. Եեեմ. Է. 67 մինչ յոյնը կ'ըսէ՝ και ἄδοντες και ἄδουσαι, = երգիչներ և երգչուհիներ, ինչպէս և բոլոր թարգմանութիւնները, հայն ունի «Երգեցիկը սաղմոսասաց արք և կանայք»: — Ես. Գ. 1. Ἰσχύοντα και ἰσχύουσιν = զօրաւորն և զօրաւորուհին, հայը կը դնէ. «Չայր հօր և զկին զօրաւոր»:

Նոյնպէս Ժող. Բ. 8. Ἐποίησά μοι ἄδοντας και ἄδουσας = cantores et cantatrices = երգիչներ և երգչուհիներ. իսկ հայերէնը ճորաբար գրած է. «Արարի ինձ զուսանս՝ արս և կանայք երգեցիկս»:

Ղուկ. ԻԱ. 2. ἠίρα = vidua ր դէմ հայերէն ունի «կին ալրի», և ասոր նման «կին մարգարէ», օր. Ես. Ը. 3. «Եւ մերձեցայ առ կինն իմ մարգարէ», ուր յոյնը և այլ թարգմանութիւններ ունին իգական սեռով, քան թէ ասոր նման «vidua», նոյնպէս Լատինը et accessi ad prophetissam:

Մինչդեռ այլուր զանց ըրած է հայ թարգմանութիւնը կիևը, մանաւանդ երբ յայտնի է և իգական բառեր կը բացատրեն, ինչպէս Ելից ԺԵ. 20. «Աննա մարգարէ, յորք Ահարոնի» προφήτις = մարգարէուհի. Ղուկ. Բ. 36. «Աննա մարգարէ զուսոր Փանուելի» = προφήτις = prophetissa ևն:

Սակայն ինչպէս Ղուկ. ԺԵ. 9ը, նոյնպէս և այլուր շատ անգամ անձանօթ կը մնայ սեռի խնդիրը. օր. Սիր. Թ. 4. «Ընդ